ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.08.2012թ.
178-ի 5

ՀՀ արտաքին գործերի նախարար
պարոն Էդվարդ Նալբանդյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Նալբանդյան,

Մեզ է դիմել ՀՀ քաղաքացի Նաիրա Հմայակի Սողոմոնյանը /ծնվ. 05.05.1972թ., անձ. AM 0587505, տրված 12.01.2012թ. 001 կողմից/ եւ խնդրել է իրեն օգնել տեղեկություն ստանալու հարցում: 1999թ.-ի հոկտեմբերի 1-ին Սյունիքի մարզի 1-ին ատյանի դատարանը որոշել է նրա ամուսնուն՝ Արտակ Վլադիմիրի Սողոմոնյանին /ծնվ. 07.02.1970թ./ պարտավորեցնել տրամադրել ալիմենտ Նաիրա Սողոմոնյանի խնամակալության ներքո գտնվող երեխային՝ Էդվարդ Արտակի Սողոմոնյանին, Արտակ Սողոմոնյանի եկամուտների ¼-ի չափով: Սակայն, Արտակ Սողոմոնյանը մեկնել է Ռուսաստանի Դաշնություն եւ որեւէ գումար երբեւէ չի փոխանցել Նաիրա Սողոմոնյանի երեխայի հաշվին դատարանի որոշման ընդունումից մինչ օրս:

Նաիրա Սողոմոնյանը դիմել է ՀՀ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը՝ դատարանի վճիռն իրականացնելու եւ Արտակ Սողոմոնյանից չվճարված ալիմենտի գումարը բռնագանձելու խնդրանքով: Սակայն, ՀՀ ԴԱՀԿ ծառայությունը չի կարողացել պարզել պարտապան Արտակ Սողոմոնյանի գտնվելու վայրը Ռուսաստանի Դաշնությունում, ուստի, կարճել է կատարողական վարույթը:

Նաիրա Սողոմոնյանին ՀՀ Արդարադատության նախարարության կողմից տրված բանավոր տեղեկությունների համաձայն՝ նախարարությունը կարող է ձեռնամուխ լինել Արտակ Սողոմոնյանի կողմից չվճարված ալիմենտի գումարի բռնագանձմանը ի օգուտ երեխայի միայն այն դեպքում, եթե պարզվի Արտակ սողոմոնյանի գտնվելու հասցեն Ռուսաստանի Դաշնությունում:

Հայտնում ենք նաեւ, որ Արտակ Վլադիմիրի Սողոմոնյանը 1999թ.-ից ի վեր փոխել է ՀՀ իր քաղաքացիությունը եւ այժմ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է:

Ուստի, ելնելով վերոգրյալից խնդրում ենք հայտնել.

1. Կարո՞ղ է արդյոք ՀՀ արտաքին գործերի նախարարությունը վերհանել Արտակ Վլադիմիրի Սողոմոնյանի՝ Ռուսաստանի Դաշնությունում գրանցման եւ բնակության հասցեները:
2. Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել Արտակ Վլադիմիրի Սողոմոնյանի՝ Ռուսաստանի Դաշնությունում գրանցման եւ բնակության հասցեները:

3. Եթե ոչ, ապա խնդրում ենք հայտնել, թե Ռուսաստանի Դաշնությունում Արտակ Վլադիմիրի Սողոմոնյանի՝ Ռուսաստանի Դաշնությունում գրանցման եւ բնակության հասցեները իմանալու ի՞նչ հնարավոր միջոցներ գոյություն ունեն, ո՞ր մարմինների իրավասությունում է դա գտնվում:

Նշենք նաեւ, որ տվյալ հարցերով դիմել ենք նաեւ ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության դեսպանատանը, սակայն որեւէ արձագանք չենք ստացել:

Վլադիմիրի Սողոմոնյանի վերաբերյալ տվյալներ՝
- Հնարավոր բնակության վայրը՝ Ռոստովի մարզ, Տացինսկի շրջան, ավան Ժիրնով,
- Անձնագիր՝ 10СЛ 6058039,
- Մայր՝ Տատյանա Սողոմոնյան,
- Եղբայր՝ Աշոտ Սողոմոնյան:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան

Կապ՝ 099 11 30 99 Գեւորգ Հայրապետյան
091 23 09 99 Նաիրա Սողոմոնյան